ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՁԵՌՆԱՐԿ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Հարգելի ընտրող

2018թ. սեպտեմբերի 23-ին անցկացվելու են Երևանի ավագանու ընտրություններ:

Քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոններում՝ քվեարկության օրը ժամը 8.00-ից մինչև 20.00-ն:

Ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ, լիազորված քվեարկությունն արգելվում է:

Այցելելով ընտրական տեղամաս ընտրողը մոտենում է մասնագետին, ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը:

Երևանի ավագանու ընտրություններին անձը հաստատող փաստաթուղթ են համարվում.

- ✓ **անձնագիրը,**
- ✓ **նույնականացման քարտը (ID քարտ),**

- ✓ **կենսաչափական (բիոմետրիկ) անձնագիրը,**
- ✓ **անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը (9-րդ ձև)՝ տրված ոստիկանության կողմից,**
- ✓ **ժամանակավոր կացության քարտը,**
- ✓ **մշտական կացության քարտը,**
- ✓ **հատուկ անձնագիրը,**
- ✓ **կացության վկայականը,**
- ✓ **կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը,**
- ✓ **Ռուսաստանի Դաշնության անձնագիրը՝ տվյալ համայնքի բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ նշումով**

Մասնագետը ստուգում է ընտրողի ինքնությունը՝ ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի միջոցով և ներկայացրած փաստաթուղթը ներմուծում է տեխնիկական սարքավորման մեջ:

Եթե ընտրողը գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, ապա էկրանին հայտնվում է դեղին նշան և ընտրողը դուրս է հրավիրվում:

Եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է կարմիր նշան և անմիջապես հրավիրվում են ոստիկանության ծառայողները:

Եթե սարքն ինքնուրույն չի ընթերցում անձը հաստատող փաստաթուղթը, ապա փաստաթղթի տվյալները ներմուծվում են սարքի մեջ մասնագետի կողմից:

Եթե ընտրողը գրանցված է տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և չի մասնակցել քվեարկությանը, ապա սարքի էկրանին հայտնվում է կանաչ նշան:

Կանաչ նշանի դեպքում ընտրողը ներմուծում է մատնահետքը սարքավորման մեջ, որից հետո սարքը տպում է կտրոն:

Ստանալով կտրոնը ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին:

Հանձնաժողովի անդամը վերցնում է կտրոնը ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի անունը, ազգանունը: Ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց, իսկ հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում ընտրողի ստորագրության դիմաց և կտրոնի վրա:

Եթե ընտրողը չի կարողանում ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա իրավունք ունի դիմել այլ քաղաքացու օգնության՝ բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների:

Եթե ընտրողն ունի անձնական ֆաքսիմելային ստորագրություն, ապա կարող է ընտրողների ցուցակում ստորագրելու համար օգտագործել իր ֆաքսիմելային ստորագրությունը:

Գրանցվելուց հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի մյուս անդամին, ներկայացնում կտրոնը և ստանում քվեաթերթիկներ և քվեարկության մեկ:

Ընտրողը ստանում է մեկ քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար:

Ընտրողը քվեարկում է քվեարկության խցիկում գաղտնի:

Ընտրողը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած՝ V ձևի նշում է կատարում այն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անվան

դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում:

Քվեարկելուց հետո քվեաթերթիկը տեղավորում է քվեարկության ծրարում:

Կտրոնը չմոռանալ քվեարկության խցիկում:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, ապա հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո իրավունք ունի քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, ով չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, ԶԼՄ ներկայացուցիչ, այցելու:

Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:

Ընտրողը մոտենում է քվեատուփին: Հանձնաժողովի անդամը վերցնում է քվեարկության կտրոնը և առանց քվեարկության ծրարը վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասոսնձվող դրոշմանիշը, որից հետո բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողն իր քվեարկության ծրարը գցում է քվեատուփի մեջ և հեռանում ընտրական տեղամասից:

Ուշադրություն

Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում: